

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՔԱՅԱԼԵ 1880 ԱՄԵՆ

Ն Տ Ս Տ Գ.
25 ՅՈՒՆԻՒ 1880



Ա. ՊՈՆԻ

1880

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
Դ Գում-Գաբու, Պատրիարքարան փողոց Դ

ԴՐԱՄՆԵՐ ԱԶԴԱՅԻՆ ԺՈՂՈՎ 03

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

ԱԵՐՎԻՀԵՆ էֆենտի	Ա. Ա. Ա. ՎԵՆԱՊԵԴԻ
Յ. ՄԵՐԵԿՄ-ԳՈՒՂԻ էֆենտի	Բ. »
ՄԻՔԱՅԵԼ էֆենտի Մամիկոնեան	Գ. »
ՌԵԹԵՈՍ էֆենտի ՊԵՐԱՊԵՐԵԱՆ	Ա. Ա. ՎԵՆԱՊԵԴԻ
ՄԿՐՏԻՉ էֆենտի ՄԵՂԻՔԵԱՆ	Բ. »
ՄԻՀՐԱՅ էֆենտի Զօպանեան	Գ. »

ԶԵՆ. ՅԱՍՈՎՔԵԱՆ ԴԻԽԱՆ

Տ. Մատթէոս Եպիսկոպոս Խղմիրլեան
Հովհաննէս Քահանա Մկրեան
Պապի Էֆէնտի Պապօեան

Դաստիակոթեան դիւան

Յարութիւն էֆենտի թիւլեան
Ակթէոս էֆենտի Պէքալէքեան
Տոքթոռ. Ուապւաէլեան էֆենտի

Կայուածոց դիման

Այս էտիս էֆէնտի կիրտազեան
Բարսեղ էֆէնտի Հալածեան
Քրիստոսառար էֆ. Ղաղարոսեան

Համարակալութեան դիսան

Յակոբ Էֆէնտի Ալշակ
Պօղոս Էֆէնտի Թորդոմեան
Յովհաննէս Էֆէնտի Պօյաճեան

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՐՈՒ 1880 ԱՎԱՆ

U T U S Q.

25 ՅՈՒԼԻ 1880

Ա.ԶԳ.Ա.ՅԻՒՆ ԵՐԵՍՈՓՈԽԱՆՔ

		ՀՅԱՀՐՎՀԸՆԴՆՔ	
1	Կարապետ Եպո. Սերոբեան		(Ա. Վիճակ)
2	Յիմօն Եպո. Սէֆէրեան	Բ	Գումզարու, Կէտիկ փաշա եւ Գումզարուի դուրս
3	Ամբրոսիոս Վ. Ռուբինեան	Բ	21 Գրիգոր Պէրպէրեան
4	Կարապետ Ք. Սէթեան	Բ	22 Գէորգ Ստիմարաձեան
			23 Խաչիկ Մանկասարեան
			24 Կարապետ Աղարդմաձեան
			25 Համբարձում Մագպուլեան
			26 Մինաս Գափամտանեան
5	Մատթէոս Եպօ. Իղմիրլեան	Բ	27 Յովհաննէս Պոյանեան
6	Պողոս Վ. Խօլտամեան	Բ	28 Ն. Մէջլուրեան Տօքթօր
7	Յովհաննէս Փ. Մկրեան	Բ	29 Պողոս Պառնասեան
8	Դրիգոր » Աճէմեան	Բ	30 Սարգիս Աղարէկեան
			31 Սահակ Ապրօ
			32 Սենեքերիմ Մանուկեան
			33 Բարթող Քիւրքճիպաշեան
			34 Ասուլմ Տէրոյէնց
			35 Գէորգ Ապտուլահետն
			36 Յ. Մէրեէմ-Գուլի
			37 Աւետիս Կիրտաղեան
			(Բ. Վիճակ)
			Պէշիկբաշ
			38 Անդրանիկ Կրճիկեան
			39 Ալիքսան Խօրասանձեան
			40 Բարսեղ Հալանձեան
			Եկնիգաբու
			41 Մկրտիչ Քիւրքճիսանլեան
			42 Սեպուհ Մագսուտեան
			43 Մարուք Ֆրէնիկեան
			44 Պողոս Էնքսէրճեան
			Խամկիստար Ս. Խաչ
			45 Սիմօն Ֆէլէկեան
			46 Ստեփան Ասլանեան
			(Գ. Վիճակ)
			47 Յ. Շիշմանեան Տօքթօր Բ Պ
			48 Խամկիստար Ս. Կարապետ
			49 Միհրն Պահճէգափուլեան
			50 Պողոս Թորգոմեան
			51 Նիկողոս Ալաճաճեան
			52 Տրդատ Փափաղեան
			(Գ. Վիճակ)
			Գասըմ բաշա
			53 Գասպար Զէրազ
			Բերա
			54 Արիկ Ունճեան
			55 Դրիգոր Սէլիմիչճեան
			56 Գրիգոր Օտեան
			57 Մէրլիշչէն
			58 Ռափայէլեան Տօքթօր
			59 Միքայէլ Մօմճեան
			60 Կարապետ Քաղազեան
			61
			62
			Միջագիւղ
			63 Յակոբ Նորատունկեան
			64 Տիգրան Եռևառութեան
			65 Մկրտիչ Գաղանձեան
			66 Աւետիս Գոլովեան
			67 Նշան Օտեան
			Պէյզօզ Եւ Ղալարիս
			68 Միքայէլ Մամիկոնեան Բ
			(Դ. Վիճակ)
			Քոզդունձուգ Եւ Խնատիկ
			69 Յովհաննէս Էսաեան Բ Յ
			70 Ստեփան Պէլիկճեան Բ Յ



Գատըգիսդ	ԳԱԽԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ
71 Կարապետ Շահպաղեան Բ 3	Կարին
72 Մկրտիչ Մուրատեան Բ 2	101 Սիմօն Մագսուտեան Բ 3
Նարլըգաբու	Գեօրգինեա
73 Յակոր Եէմէնիճեան	102 Մ. Փափաղեան Տօքթօր Բ 3
Եկնիմանալի Սամարիոյ	Անդրիանուալոյիս
74 Պողոս Մկրտիչեան Բ 3	103 Վիչէն Ապաւուլահ Բ 3
Թօվիգափու.	Նիկոմիդիա
75 Յովհաննէս Մարգարեան	104 Կ. Ս. Խւթիւճեան Բ 3
Եյուպ Ա. Եղիա Ե. Ա.	Ակն
Աստուածածին	105 Աւետիս Պարունեան Բ 2
76 Գարեգին Յ. Մէլիքեան	Դարանիսար
Գուրուցէլմէ	106 Արաբկիր
77 Ասափա Խկիտապաշեան Բ 2	107 Կարապետ Խաչիկեան Բ 3
Հիսար Ե. Պօյանի գիւղ	Բաղէջ
78 Յովհաննէս Արշակունի Բ 3	108 Պրուսա
Նոր գիւղ Ե. Սրենիա	109 Քրիստոստուր Ղազարոսեան
79 Ղազար Հովուեան	Երդոկիա
Պայատ	110 Ամասիա
80 Մկրտիչ Գ. Էսաեան Բ 3	111 Համբարձում Ալաճաճեան
81 Յովհաննէս Կրծիկեան	Բայուս
82 Տելեմաք Ենքսէրճեան	112 Յովհաննէս Աղնաւորեան Բ 2
Քարակիորիսկ	Եղեսիա
83 Սեպուհ Թիւրապեան Բ 2	113 Յակոր Խւթիւճեան
84	Մանճըլիս
(Ե. Վիճակ)	114 Համբարձում Սարըքէշիւնս
Սամարիա	Բայուս
85 Ալիքսան Պէշիրեան	115 Յակոր Առաջան
86 Եղիազար Մէլիքեան Բ 3	116 Ուժէսս Պէրպէրեան Բ 2
87 Մինաս Ճաֆճափեան	Թէքիրտաղ
88 Նազարէթ Շահպաղեան	117 Տիգրան Գ. Սինանեան Բ 2
89 Յարութիւն Թիւրեան	Կեսարիա
90 Յակոր Արշակ	118 Գէորգ Գլուխեան
91 Սեպուհ Թիւրսիւդեան Բ	119 Տարբերդ
92	120 Պալըրես
93	
94	
Խասպիդ	
95 Առաքել Ալթուն Տիւրրի	
96 Ուժէսս Պէշիրճեան	
97 Սարդիս Արքահամեան Բ 3	
98 Մ. Արծունի Տօքթօր Բ 3	
99 Սարդիս Քավուքճեան Բ 3	
100 Աժանագինէ Արապեան Բ 3	

Մուշ
121 Ստելիան Փափաղեան
Տիվրիկ
122 Նշան Գարագաշ Բ 2
Զելրուն Ե. Մարաշ
123
Տրապիգօն
124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ 3
Պաղտատ
125 Մելքօն Խոկէնտէրեան Բ 3
Տիգրանակերտ
126 Մէրան Չոպանեան Վան
127
Աղրամար
128 Հալեպ Ե. Այնըրապ
129 Աեքաստիա
130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
Ռուսուլս
131
Կարս
132 Արբահամ Յ. Այլաղեան
Զմշկածագ
133 Համբարձում Սարըքէշիւնս
Գաղատիա
134 Ատանա
135 Սուբրդ
136 Մատթէսս Ալքսանեան Բ 3
Եօղդատ
137 Լողոֆէթ Պալեօլեան
Մալարիա
138 Գէորգ Վարդանեան Բ
Իզմիր
139 Պապի Պապօւեան
Եզիլառու
140 Արբահամ Մուրատեան

Օ Բ Ա Կ Ա Բ Ի Գ

- Ա. Բնատրութիւն Նախաքննիչ դիւանաց :
- Բ. Ծրագիր վարչական կազմակերպութեան .
- Գ. Խնդիր ժողովարանի տեղափոխութեան և բացակայութեան երեսփոխանաց . — Տեղեկադիր Յանձնախմբին :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն անձնական ակարութեան պատճառաւ բացակայ գտնուելով ժողովէն, ընդ առժամեայ նախագահութեամբ Գեր. Տ. Կարապետ Եպիսկոպոսի Սերոբեան եւ Ատենապետութեամբ Յ. Մէլիքէմ-Գուլի էֆէնտիի ատեանը բացուեցաւ ժամ 7 ։ ին, 'ի ներկայութեան 35 երեսփոխանաց, որոց թիւը 45 ի յանգեցաւ 'ի վերջէ :

Նորընտիր Ատենադպիր է ֆէնտիներէն Մէլիքեան Մկրտիչ եւ Չոպանեան Միհրան է ֆէնտիներն, որ ներկայ էին, հրաւիրուեցան : Խընց պաշտօնին գլուխն անցնելու, բայց առարկելով թէ հրաժարած են պաշտօնէ, առժամեայ կերպով յանձն առին կատարել պաշտօնն, եւ Դիւանն անցան :

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — Կը ցաւիմ որ կարծօր-

եայ ուղեւորութեան մը պատճառաւ նախորդ երկու նիստերուն ներկայ չկրցայ զտնուիլ : Խմ բացակայութեանս միջոցին՝ ժողովդ այս նոր շրջանին համար ալ Դեր-ատենապետի պաշտօնութեան յոյցին համար, որով կը պատուէ զիս . բայց չեմ յակնիր երբէք կարծելու թէ անցեալ շըրջանին մի եւ նոյն պաշտօնին մէջ մէծ ձեռնահասութիւն եւ յանդղակութիւն ցոյց տուած եւ ժողովիդ այս նոր ընտրութեան արժանի եղած լինիմ : Ես կը նկատեմ զայն աւելի իր արդիւնք մի համակարգական զգացման, որով ուզած էք զիս քաջալերել . ուստի կրկնակի պարտաւորութիւն կզգամ այդ պաշտօնին մէջ ունեցած թերութիւններս չափաւուրելու եւ արժանի ընծայելու զիս ձեր վատահութեան :

Ա. Ա. սակայն ոչ նուազ ցաւօք իմացայ որ իմ նորընտիր հինգ ընկերակիցներս մի առ մի

Հրաժեշտ մատուցեր են իրենց սկաշտօնէն եւ
միայն ես մնացեր ևմ չհրաժարող Մայր դիւա-
նի անդամներէն :

Իրաց այս վիճակին մէջ չգլուխեմ թէ աղէկ բան մ'ըրած կըլլա՞մ չհրաժարելով եւ ընկերակդացու օրինակին չհետեւելով :

ԶԱՅՆԵՐ . — Ոչ , ոչ , դուք պէտք
է մնաք . ձեր մնալն օդտակար է :

ԱՏԵՆԱՊԵՏ կֆ. — (Շարունակելով) Անց-
կառ նիստեն մասունք ունենալու վերադարձել

Հրամայեց որ ժողովոյ նիստը Ղալաթիոյ մէջ գումարուի, ինչպէս որ եղաւ այսօր :

Սբդ՝ Դիւանի հրաժարեալ հինգ անդամոց

միոյն կողմէ միայն պատասխան մ'եկած է ,
որով իւր հրաժարականը կը կրկնէ , իսկ միւս-
ներն ընդունած են՝ թէ ոչ իրենց պաշտօնը ,

տեղեկութիւն մը չկայ դեռ : Աւստի դեռ եւս
օրակարդին չանցած՝ կուղեմ Ժողովին կարծիքն

հասկնալ թէ՝ նախ այս հրաժարման խնդիրը
նկատողութեան առնուլ կուզէ^o, թէ ոչ՝ զայն

վերապահելով յառաջիկացին՝ օրակարգին անց-
նիլ պատշաճ կը համարի :

ԴԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Ես կառաջար-
կեմ նախապէս այդ հրաժարման խնդիրը նկա-

տողութեան առնուլ, եւ այնուհետեւ ուրիշ
խնդրոց անցնիլ, վասն զի ամեն բանէ առաջ
Սայր դիւանին կազմութիւնը կարեւոր է ծո-
ղովին համար :

ԵՌԻՍՈՒԹԵԱՆ Տ. կֆ. — Ես չեմ կրնար
համաձայնիլ Քրիստոսառւր էֆէնտիի առաջար-

կութեան : Փողովս Սրբազնն Պատրիարք Հօր
յանձնարարեց Դիւանի հրաժարեալ անդամնե-
րը յորդորել որ իրենց պաշտօնն յանձն առ-
նուն , եւ դեռ այս մասին Նորին Սրբազնու-
թեան կողմէ տեղեկութիւն մը տրուած չէ մեզ
թէ անոնցմէ ո՞րն ընդունած է իրեն պաշտօնն
եւ ո՞րը կրկնած է հրաժարականն . ուստի ա-
նըստուգութեան մէջ ինչ որ ալ խօսիմք ա-
նօգուտ է եւ ոլէտք չկայ այս մասին խըն-
դիր յուզելու այսօր . մանաւանդ որ արդէն
Ժողովին Բ. Ատենապետը Դիւանին գլուխը կը
գտնուի եւ ատեանը կը վարէ : Ուստի կառա-
ջարկեմ օրակարգին անցնիլ :

(Երեսպիոխանք ոմանք կը ձայնակցին այս առաջարկին) :

ԴԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. Էֆ. — Թէ եւ այդ առաջարկը ձայնակիցներ կը դտնէ, բայց ըստ կանոնի սկզբէ որ ամենէն առաջ Ժողովին Դիւանը կազմուած լինէր. վասն զի այդ խըն-

զիրն ամենէն առելի ստիլողական է և առանց
Մայր Գիւտանի կադմութեան բան մը չենք կը բ-
նար դործել :

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — Յողովն իւր Մայր դիւ-
տանն անկազմ չկրնար նկատել . քանի որ
ընտրելոց հրաժարականները մերժած եւ տա-
կաւին անոնցմէ պատասխան չէ ընդունած ,
բաց ի մէկէն : Բայց իւր Նախաքննիչ Դիւան-
ները դեռ չէ ընտրած եւ պէտք է ընտրէ ան-
յապաղ , որպէս զի կարող լինի իւր գործերն
օրինաւորապէս յառաջ վարելու : Ուստի եթէ
Ժողովը կը հաճի , Դիւանիս վրայ գտնուած
բոլոր այն թղթերն , որ Ատենական գործո-
ղութեանց կը վերաբերին , ի բաց պիտի թո-
ղում , եւ Նախաքննիչ դիւանաց կազմութեան
խնդիրը սկսած :

Արդէն իմ պաշտօնիս բնութիւնն ալ մաս
սամբ այսպէս կը պահանջէ , վասն զի իբր Դեր
ատենապետ չէի կրնար կանխաւ իմաստաօի-
րած ըլլալ Դիւանին վերաբերեալ թղթերն , եւ
հետեւաչար այս պահուս անուղեակ եմ ա-
նոնց պարունակութեանն ,

Այս պիճակին մէջ պատշաճագոյն կը լինի
որ Փողովդ թոյլ տայ ինձ մնկուսի թողու-
առ այժմ այդ թղթերն եւ օրակարգը ձեռ-
առնուլ : Այս մասին Փողովոյդ կամաց կը դի-
մեմ :

Հետեւասլէս Ատենապետ է Փէնտին քուէ
կը դնէ խնդիրն եւ Փողովը՝ մեծադոյն մա
սամք՝ ԿՈՐՈՇԵ օրակարգին, անցնիլ :

© 2010 Pearson Education, Inc.

ՕՐԱԿԱՐԳ

Կազմութիւն Նախարարնեց դիւտեազ

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — Ժողովդ Նախաքննիչ
Դիւանաց ընտրութեանը պիտի ձեռնարկէ այս
ժըմ. եւ կսպասէ անշուշտ ընտրելեաց ողբ
բագրելի ցուցակին, զոր Մայր դիւանը սպատ
րաստելու պաշտօն ունի ըստ ներքին կանո
նագրի :

Այլ սակայն Մայր Դիւանի անդամներն
ամբողջ չըլլալուն պատճառաւ չէ կրցած այ-
ցուցակը պատրաստուիլ ճիշդ այն եղանակաւ
որով կը շինուեր ուրիշ տարիներու ես առանձի-
գտայ զիս Մայր դիւանի անդամոց մէջ չհրա-
ժարեալ, եւ սպիալուեցայ միայնակ պատրաստե-

այդ ցուցակն , պէտք է սակայն յայտարարեն
որ ներկայ երկու Առենադպիր է ֆէնտիներու
ալ կարծիքն առի եւ այնպէս կը բերեմ զայ
ժողովիդ :

Այս ցանկն արդէն չունի զօրութիւն ձեզ քուէն կաշկանդելու, քանի որ ամեն երեսփոխան ազատ է ուզածին չափ սրբագրելու զայն ուստի չեմ կարծեր որ արժէ անոր պարաստութեան ձեւին նկատմամբ բժախնդիլ լինիլ, Եթէ նոյնն է նաեւ ձեր կարծիքն ալ, կը ցրուենք պատրաստուած ցանկերը եւ անոնց վրայ կը կատարենք այսօր նախաքննիչ դիւանաց բնարութիւնն :

(Համամտութեան ձայներ ամենութեա)

Փողովը կը հաւանի ընտրութեան ձեռ
նարկելու , պատրաստուած ցանկերը կը ցըլ
ուին երեսփոխանաց , եւ քուէհամարի քննի
կը նշանակուին վիճակաւ :

Տ. Յովհաննէս Վարդապետ Փափաղեան
Տ. Յովհաննէս Քահանայ Մկրեան
Համբարձում էֆէնտի Մադպուլեան
Միհրան էֆէնտի Պահճէգափուլեան

Հետեւապէս ծողովը Նախաքննիչ Դիւանին ընտրութեան կը ձեռնարկէ, որու 37 երես փոխանք մամնակից կը գտնուին, եւ քուէնամարը կատարուելով Ատենապետ էֆէնտի կը կարդայ ընտրելոց անուններն, ըստ յետագայ ցուցակի.

Չեռնիասուրեան Դիւան

Տ. Մաթէսս Եպիսկոպոս Խզմիրլեան
Տ. Յովհաննէս Քահանայ Մկրեան
Պապի էֆէնտի Պապօնան

Դաստիարակուրեան Դիւան

Յարութիւն էֆէնտի Թիւեան
Ռէթէսս » Պէրպէլեան
Ռաֆայէլեան » Տօքթէս

Կալուածոց Դիւան

Աւետիս էֆէնտի Կիրտաղեան
Բարսեղ » Հալանեան
Քրիստոսուր » Պաղարոսեան

Համարակալուրեան Դիւան

Յակոբ էֆէնտի Արշակ
Պողոս » Թորգոմեան
Յովհաննէս » Պօյանեան

Յարաբերուրեան Դիւան

Դարեգին էֆէնտի Մէլիքեան
Միհրան » Զօպանեան
Նշան » Օտեան

Երանասուրեան Դիւան

Տ. Ներսէս Վարդապետ Ալսմնեան
Տելեմաք էֆէնտի Եքսէրճեան
Լողօֆէթ » Պալեօղեան

Նախածեռնուրեան Դիւան

Տիգրան էֆէնտի Եռւսութեան
Ղազար » Հովուեան
Աւետիս » Քոլուեան

Խմբագրուրեան Դիւան

Կարապետ էֆէնտի Խոթիւճեան
Մկրտիչ » Մելիքեան
Արրահամ » Մուրատեան

ծողովը Վ.Ա.Խերեթ սոյն ընտրութիւնն եւ ընտրեալք Նախաքննիչ Դիւանաց անդամ ՀԲԴ- ՀԱԿՈՒԵՑԱՆ :

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Ահաւասիկ ծողովիս Նախաքննիչ դիւաններն ընտրուեցան. կը շը- նորհաւորեմ յանուն ծողովին իրենց պաշտօնն եւ կը հրաւիրեմ նորընտիր Դիւաններն որ հա- մին ծողովոյ յառաջիկայ նիստէն առաջ որոշել իրենց Ատենապետներն եւ հաղորդել անոնց անունը Մայր դիւանիս, որպէս զի Ատենապե- տաց դիւանը գումարուելով պատրաստէ ծը- րագիրն ուղերձին, որ ծողովին կողմէ պիտի մատուցուի Սրբազն Պատրիարք Հօր, ՚ի պա- տասխան նախագահական գրոյն :

Բ.

Երագիր Վարչական Կազմակերպուրեան

ԱՏԵՆԱՊԵՏ Էֆ. — Կը յիշէք որ Ազգային ժողովդ իւր անցեալ շրջանին ժ. նիստին մէջ՝ Ալշանեան Ստեփան Փաշայի, որ այն ատեն

Ատենապետ էր Ֆողովին, առաջարկութեան վրայ՝ վարչական կազմակերպութեան դրու- թիւնը փոփոխելու հարկն ընդունած, եւ Ատենապետաց դիւանին յանձնած էր որ Վարչութեան կրօնական եւ Պաղաքական Ֆո- ղովին մէկ մէկ ներկայացուցիչ առնլով Ահամանադրութեան վարչական գլուխն վերա- քննէ եւ ծրագիր մը բերէ : Ատենապետաց դիւանն Ազգային ժողովոյ յանձնարարութիւնը կատարած, եւ վարչական կազմակերպութեան վրայ ծրագիր մը պատրաստած եւ մատուցած է ժողովիս, անշուշտ Երեսիսիանք մինչեւ ցարդ նոյն ծրագիրն՝ որ անցեալ շրջանի վերջին քանակութեան նիստի ատենադրութեան մէջ անցած է, ուսումնական իրավունք եւ վարչական դրութեան համար :

Այդ օրինաց ծրագիրը ժողովոյդ նկատո- զութեան կենթարկեմ այժմ եւ խօսք կուտամ Եռւսութեան էֆէնտիի որ՝ իրը տեղեկաբեր Ատենապետաց դիւանին՝ հաճի պէտք եղած բացատրութիւնները տալ ժողովիդ, ծրագրին ընդունած փոփոխութեանց վրայ :

ԵՐԱՆԱԿԱՆ ՏԱԿԱՆ Տ. Էֆէնտի — (Դիւանոր)
Ատենապետաց դիւանը կը փութայ, Ազ- գային Վարչութեան կազմակերպութեանը մա- սին, Ահամանադրութեան փոփոխելի յօդուա- ծոց ծրագիրը ներկայացնել :

Ինչպէս որ պատկառելի ժողովդ պիտի տեղեկանայ անոր ընթերցումէն, Դիւանս ջա- նաց ուշադրութեամբ ՚ի նկատի առնուլ այն ա- մեն պարագաներն, որք մինչեւ ցարդ արգի- լած էլն, ազգային գործոց բարւոք մատա- կարարութեան մասին Սահմանադրութեան օդ- տակար աղդեցութեան կատարեալ իրացումն:

Առանց երկար բացատրութեանց կարօտ ըլլալու, արժան կը համարիք յիշատակել աս- տանօր թէ, որովհետեւ ամեն Վարչութեան պաշտօնը, ժողովրդեան բարոյական եւ նիւ- թական շահուց պաշտօնանութիւնն է, եւ ըստ որում մեր ազգին նկատմամբ սոյն պաշտօպա- նութիւնն ՚ի գործ կը դրուի, կրօնական՝ դա-

տական՝ կրթական եւ բարեգործական հաս- տատութեանց բարւոք մատակարութեամ- բըն, եւ այս մասին ազգին ունեցած բաղմա- դարեան իրաւանց, եւ անոնց դործադրու- թեանը համար ձեռքբարձր զանազան արտօ- նութեանց եւ մենաշնորհմանց պահպանութեան հսկողութեամբը, ուստի առանց վարանման կրնամը հաստատել թէ, վարչական մարմնոց կազմութեան եղանակին բարեփոխութեամբը, զոր ժողովդ իւր 1879 Սեպտ. 21 ի նստին մէջ միաձայն հաւանութեամբ որոշեց, թէ եւ վար- չական մեքենային օրինաւորապէս շարժմանն արդելք եղող հանգոյցներուն առաջինը լուծած կը համարուի. սակայն սոյն բարեփոխութիւնը Սահմանադրութեան ոգւոյն եւ տրամադրու- թեանց համաձայնեցնելու փափուկ պաշտօնը, իւր Ատենապետաց դիւանին յանձնելուն հետ միատեղ՝ պարտք դրաւ նաեւ մեր վրայ, Սահմանադրութեան հաստատուած օրէն ի վեր, մերթ ընդ մերթ նորա վերաբննութեանը հա- մար կարեւոր դատուած կէտերն վնասուելու մասին կազմուած զանազան մասնախորհրդոց կարծիքներն քննել եւ ըստ այնու ծրագիր մը պատրաստել :

Ուստի ձեր Դիւանը իւր պաշտօնը ըստ արժանուոյն կատարելու համար, այս մասին մինչեւ ցարդ արտայատուած բոլոր կարծիք- ները ուշադրութեամբ քննելէ, եւ իւր ան- դամակացաց իւրաքանչիւրին փորձառութեամբ գոյացուցած կարծեաց հետ բաղդատելէ ետեւ, համաձայնութիւն մը գոյացնելու աշխատին բնական եւ միանդամայն ամենէն աւելի գոր- ծադրական միջոցն ըլլալուն համոզուած, պար- տաւորեցաւ իւր բանակցութեանց երկարիլը նախամեծար համարել, քան թէ առանց հա- սուն խորհրդածութեան յօրինեալ ծրագիր մը ներկայացնել, ապահով ըլլալով ժողովոյդ նե- րողամտութեանն երբ պատճառ իմանայ:

Ըստ այսմ, ձեր Դիւանը, յետ երկար խորհրդակցութեան իւր անդամոց միանդայն հաւանութեամբը կը ներկայացնէ իւր ծրագի- րը, ծանուցանելով միանդամայն թէ երեսիու- խանաց շատերուն մասնաւոր կարծիքն իմա- նալէ եւ յատկապէս Փափաղեան էֆէնտիի դը-

բաւոր առաջարկութիւնն 'ի նկատի առնելէ ,
եւ պէտք եղած բացտրութիւններն բերա-
նացի Դիւանիս եւ իւր մէջ փոխանակուելէ
ետեւ , Պատրիարքական իշխանութեան ժամա-
նակաւոր ըլլալու կէտն յետաձգել որոշելով ,
Փափազեան է ֆէնտի ալ Դիւանիս պատրաս-
տած ծրագրին համաձայնած է :

Դիւանս կը յուսայ որ միեւնոյն համաձայ-
նութիւնը երեսփոխանաց մէջ ալ պլիտի գո-
յանայ՝ թէ վարչական մեքենայն ըստ օրինի
գործել կարենալու համար, ձեւը բաւական չէ,
այլ պէտք է միանդամայն աղատել զայն իւր
գործելու ոյժն կաշկանդող կապերէն, եւ այս
կապերն են վարչական մարմնոց ընտրութեան
եղանակը :

Ցիրաւի , Տեարք Երեսփոխանք , ամենայն
ջանք՝ ի դերեւ կելլէ , ամենէն անձնուէր մարդ -
կանց առջեւ , երբ դործաղիր մարմինն , ըս-
կըզբամբ եւ կարծեօք համամիտ մարդիկներէ
չբաղկանար : Քանիցո անդամ խօսուած եւ
հաստատուած ճշմարտութիւն մ'է այս , սա-
կայն դժբաղդաբար մինչեւ ցարդ սահմանադ-
րական նախապաշարում մը հակառակ կը
կարծէր զայն թէ՛ սահմանադրական սկզբանց
եւ թէ մեր ազգային հանգամանաց . անոր
համար վարչական անդամոց ընտրութեան ի-
րաւունքը միշտ Ազգային ժողովոյ պահած էր .
սակայն ինչպէս որ դիտել տուին երեսփոխան-
ներէն չատեր , քանի որ մեր ներքին կանոնա-
դրութեան տրամադրութեան ուժով , Ազգային
վարչութիւնն միշտ հարցապնդելու իրաւունքը
Սահմանադրութեան ողւոյն համաձայն ըլլալը
հանդուած է . ասս ասամբ առաջ է ի առաջ

ասացուած է, այս պատճառաւ երեւակայուած բոլոր առարկութիւնք կանհետանան չետեւապէս Վարչական մարմնոց ընտրական իրաւունքը Պատրիոտքին յանձնելով, իւր եւ երեսփոխանութեան վատահութիւնը վայելող, եւ իրենց-մէ պահանջուած ծառայութիւնը իրրեւ պարտականութիւն կատարելու եւ գործերնին իրօշ պատասխանատուութեան ենթարկուիլը յանձն առնող համամիտ եւ համերաշխ անձինքներէ բազկացեալ Աղդային վարչութեան մը կաղմութիւնն կարելիութեան միակ միջոցն իրնայ համարուիլ է

Այսպէս վարչական մեջենային շարժմա-

Համար հարկ եղած ոյժն՝ որ իւր անդամոց
համամտութեան եւ իսկական պատասխանա-
ռութեանը մէջ կը կայանայ, տրուելէ ե-
ռեւ, հարկ չեմք համարիր անոր կազմակեր-
պութեան ձեւին եւ աշխատութեան բաժան-
ման եղանակին վրայ մեկնութիւն տալ, վա-
րն զի այս կէտը ամեն ատենի համար փոփո-
սելի կրնայ ըլլայ եւ ամեն տեղ ամեն երկրի
մէջ ժամանակին պահանջմանց համաձայն
պէտք եղած վարչական գործակատարները կը
նշանակուին: Արդի պիտոյից համար առաջար-
կած եղանակնիս ամենէն ընտրելագոյնը կը
համարիմք, որ փորձառութեամբ հետզհետէ
կրնայ բարեփոխիլ:

Կան միայն մէկ քանի կէտեր, որոց բառեփոխութիւնը ընելու արտօնութիւն չունեալուս համար, միամիայն պատկառելի Ատենիու ու, աղբութեանը կը ներկայացնեմք :

Այս ծրագիրը աւարտելէ վերջը, պէտք
է նաև

1. — Որոշել թէ՝ Ազգ. ժողովոյ բացումը այն-
պիսի ժամանակի մը մէջ ըլլալու է, որ-
պէս զի Վարչական ընտրութեանց հետ
համաձայնի .

2. — Թաղական մատակարարութեան գլխոյն
վերաքննութիւնը կատարել ընդունելով
թաղերու մէջ երեսփոխանական դրու-
թեան համաձայն թաղակոյտներ կաղ-
մելու, եւ թէ թաղական խորհրդոյ ան-
դամոց եւ թէ երեսփոխանաց ընտրու-
թիւնը անոնց ձեռքով ընել տալու առա-
ջարկը քննելու ստիպողականութիւնը :

Արդ՝ յանուն Դիւանի այս յանձնարարութիւնն ընելէ ետեւ, կը փութամ առաջարկել նաեւ, թէ ըստ որում ամեն օրինական ծրագիր պէտք է երեք ընթերցմամբ ժողովոյ քուէն անցնի, բայց որովհեաեւ ազգային գործոց արդի վիճակը, Վարչութեան անմիջալէս կազմուիլն ստիպողական հարկի մէջ դրած է, եւ նկատելով միանգամայն որ ներկայ ծրագրին սկզբունքը արդէն երեսիուանութեան միաձայն հաւանութեամբը որոշուած, եւ միայն սոյն սկզբան գործադրութեան եղանակն յաւճնուած էր Դիւանիս, Ժողովը կրնալ խորոռոն արեագուական Ռէ. Տ.

ուալէ ետեւ, այս օրուան նիստին մէջ զ զայն
լարդալ, եւ եթէ դիտողութիւն մը կաց,
լայն լսել, ու յառաջիկայ նստին մէջ վերջ-
ական կերպիւ քուէ արկուիլը որոշել, որով կա-
սոնական տրամադրութիւնն ալ եղծուած չըլ-
ար, սկզբան որոշումը իրրեւ առաջին, այս-
օրուանը երկրորդ եւ յառաջիկայ նստինը եր-
որդ ընթերցումն համարելով :

ԱՏԵՆԱՊԵՏ էն, — Տեղեկաբեր է Փէնտիի
բացատրութենէն լսեցիք թէ Ատենապետաց
դիւանն ի՞նչ հլուման վրայ եւ ի՞նչ եղանակու-
պատրաստած է վարչական կազմակերպու-
թեան ծրագիրն ։ Լսեցիք նաև որ ստիպողու-
թիւն կառաջարկէ ծրագիրը վիճաբանութեան
ոնեաւ եւ որուէարկելու համար ։

Այս վերջին կետին վրայ եթէ խօսք ու-
զող կայ, ոլատրաստ ենք դիմքը լսելու :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Տեղեկաբեր է-
ֆէնտին կառաջարկէ ստիլովութիւն տալ ծը-
րագրին, եւ զայն այսօր կարդալէ եւ դիտո-
ղութիւնները լսելէ յետոյ՝ յառաջիկայ նիստին
մէջ քուէ արկել : Եթէ վարչական կազմա-
կերպութեան խնդիրն ստիլովութիւն ու-
նի, ես հարկ չեմ տեսներ մինչեւ յառա-
ջիկայ նիստ յետաձգել անոր վերջին որո-
շումն . վասն զի ամսէ մ'ի վեր ատենագրու-
թեան մէջ հրատարակուած է ծրագիրը, զոր
երեսիուսանք ՚ի հարկէ կարդացած եւ իմաս-
տասիրած են, հետեւասլէս կառաջարկեմ այսօր
անմիջապէս քննել եւ քուէ արկել զայն :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. էֆ. — Երեափոխանաց մէջ
համամտութիւն մը կը նշմարեմ 'ի նպաստ ծը-
րադրին, զոր կը բերէ մեզ Ատենապետաց
դիւանն, եւ կը տեսնեմթէ ընդհանրապէս սա
կարծիքն կը տիրէ թէ այդ ծրագիրը պէտք
է ընդունիլ, եւ մեր վարչական կազմակեր-
պութեան հին դրութիւնն վերածել այն ձե-
ւին, զոր ծրագիրը կը սահմանէ: Իմ կարծիքո
ալ նոյնն է այս մասին. կրնանք այդ ծրագիրն
ընդունիլ, ինչպէս երբեմն ներքին կանոնա-
դիրը նոյնութեամբ քուէ արկեցինք առ 'ի փորձ,

ործադրութեան մէջ տեսնուած թերութիւն-
նը հետզհետէ բարեփոխելու սկայմանաւ,
ոյնը կրնանք ընել նաեւ վարչական կաղմա-
կերպութեան ծրագրին համար . վերջապէս կը
արծեմ ես թէ երբէք արդելք մը չկայ այսօր
զուէարկելու , եւ ընդունելու կամ մերժելու
այն , եթէ մերժել հարկ դատի ծողով :

Այս ժողովն ընդունած է արդէն վարչական դրութիւնը փոփոխելու սկզբունքն , եւ այս կէտին վրայ հարկ չկայ այլ եւս խնդիր ուղելու , իսկ եթէ ծրագրին մանրամասնութիւնները քննադատել ուղենք , անշուշտ դիտողութիւններ չեն պակսիր մեզ . կան բաներ , որոց դէմ ես ալ առարկութիւններ կրնամարուցանել , բայց այս վարչական նոր մեքենային թերութիւններն ստուգելու ամենէն անվիրէալ եւ լաւագոյն եղանակը՝ փորձն է : Շատ ժամանակէ 'ի վեր ամենքս ալ դժգոհ ենք մեր վարչական կազմակերպութեան դրութենէն , ամենքս կ'զգանք զայն կերպարանափոխելու հարկն , ահաւասիկ մի նոր եղանակ կառաջարկուի մեզ , փորձենք զայն ուրեմն , եւ տեսնենք թէ այս նոր մեքենան ի՞նչ թերութիւններ ունի իւր մէջ , եւ փոյթ տանինք զայն կատարելագործելու :

Աղգային վարչութեան վիճակը խիստ
ախուրէ, եւ Աղգային ժողովը խնդրոյն ստի-
պողութիւնն ընդունած է արդէն, անցընելու
դայն օրակարգն իւր առաջին նիստին և Խո-
այս ծրագիրն արդէն քանի մը շաբաթ առա-
հրատարակուած է, եւ զոր երեսփոխանք ան-
շուշտ կարդացած են, եւ գիտեն թէ որոշել
խնդիր մ'է այս, հետեւաբար բացակայ գըտ-
նուող երեսփոխանք ալ եթէ գիտողութիւն ու-
նենային պիտի փութային դալու ժողովին
բայց քանի որ չեն եկած, գիտնալով միան-
գամայն որ ժողովն սոյն խնդրով պիտի զբա-
ղի, կը նշանակէ թէ դիտողութիւն չունին
եւ թէ համակարծիք են մեզ,

Սրդ, կառաջարկեմ այս ծրագիրն ըստում ստիպողական՝ ալարդ որոշման եղանակին ենթարկել, այսինքն միակ քուէարկութեամբ ընդունել: Եւ երբ այս նոր դըրութեան համաձայն Արքազան Պատրիարքին մեջուած վառութիւնը կազմուի, եւ արդելքնե

դանէ իւր ընթացից առջեւ , անչուշտ պիտի
գայ այս ժողովին եւ անօնց բարձումը խընդ-
րէ օրինաց անգործադրելի կամ անկատար
կէտերուն բարեփոխմամբը :

ՇԱՀՊԱԶ Ն. կՅ. —Քանի մ'ամսէ՝ ՚ի վեր Ատենապետաց դիւանն այս վորչական կազմակերպութեան խնդրովը կ'զբաղէր, եւ հազիւ ուրեմն իւր ծրագիրն աւարտելով ժողովին քննութեան ներկայեց, եւ ահաւասիկ Տեղեւկարեր էֆէնտին կուղայ կառաջարկէ մեղ, ութ օրէն նիստ մը գումարել եւ զայն վերջնապէս քուէարկել: Իսկ ոմանք աւելի քան ըլտանդեկտորն կը շտապեն եւ մինչեւ իսկ այսօր կուզեն քուէարկել խնդիրը: Զարմանալի է արդարեւ որ Ատենապետաց դիւանն ամիսներ

Ժողովին կը զլանայ պէտք եղածին չափ ժամ-
մանակ տալ զայն քննելու համար : Մեր մէջ
անգիտող չկայ խնդրոյն ստիպողութիւնն ,
բայց ազգի մը վարչական կազմութեան ձեւն
է որ պիտի որոշուի , ուստի այսպիսէ կարե-
ւոր խնդրոյ մը համար չէ թէ ութ օրուան
միջոց , այլ դէթ տասն եւ հինգ օր՝ ժամանակ
պէտք է տալ , որպէս զի երեսփոխանք կարե-
նան ուսումնասիրել խնդիրը , եւ կարծիք մը
պատրաստել :

ՄէԼիբեԱն Գ. Եֆ. — Ես ալ պիտի կըրկ-
նեմ Շահպազ է Փէնտիի առաջարկն , սակայն
փոքր ինչ տարբերութեամբ : Այս վարչական
կազմակերպութեան խնդիրը բոլորովին նոր ու
օտար չէ Փողովին համար , որ երկար ժամա-
նակ պէտք լինի զայն ուսումնասիրելու եւ
պոշելու համար , Երեսփոխանք արգէն սեր-
տած են Ատենապետաց դիւանին ընթած ծը-
րագիրն , եւ Փողովը ընդունած է իսկ անոր
սկզբունքն , որով խնդիրն իւր առաջին որո-
շումէն անցած կը համարուի . բայց ըստ կա-
նոնի տակաւին երկու որոշումէ եւս պիտի
անցնի , երկրորդը տեղի պիտի ունենայ
յօքուած առ յօդուած քննուելով եւ քուէարկը-
ւելով ծրագիրն , եւ այսօր կարգն եկած է կա-
տարելու այս գործողութիւնն . իսկ երրորդ

ոռշումն որ վերջինն է, եւ որ ծրագրին բովանդակութեանց եւ մասնաւոր տրամադրութեանց վրայ կըլլայ, ըստ կանոնի տեղի պիտի ունենայ Ակ շարաթ մըջոցաւ։ Այս երրորդ որոշումն՝ թէեւ աւելի ձեւական արարողութիւն մ'է,

այց իրը կանոնին մէկ տրամադրութիւնն՝
պէտք չէ զայն անտես անցնիլ, որքան ող աւե-
որդ լինի, ուստի թէ կանոնին համաձայն շար-
ժելու, եւ թէ միանդամայն ժողովին վրայ կառ-
կած չհրաւիրելու համար թէ աճապարանօք
ուծած ըլլայ այսպիսի ծանր խնդիր մը, կար-
ենիմ թէ շատ բանաւոր է, ինչովէս առաջար-
կեց Եռևուուֆեան էֆէնտին, այսօր երկրորդ ո-
սոցումն կատարել, եւ ութ օրէն յետոյ ըստ կա-
ռնի նորէն նիստ կազմելով վերջնապէս քուէ-
սրկել ծրագիրը :

Տ. ՎԱՀԱՆ ՎՐԴՊԵՏ. Տ. ՄԻՆԱՅԻՆ . —
առաջիկ խօսիլ կուղեմ, բայց ոչ թէ միայն կեդ-
տոնական վարչութեան կազմակերպութեան
սկառամամբ, այլ եւ Հայաստանի գաւառական
վիճակաց, վահորէից եւ դիւդորէից վրայ,
որոց վարչական կացութիւնը խիստ յոռի է:
Ճըր ներկայացնեմ ձեղ այս վիճակին, պիտի հա-
նողութք որ չը բաւեր ութ օրէն նիստ մ'ընել
միայն եւ վերջացնել խնդիրն, այլ ամեն օր
պէտք է ժողով գումարել, որ գարձեալ քիչ է
շատ իս, եւ այս վիճակին դարմանը խորհիլ,
վասն զի շատ տիսուր է՝ մեր վարչական կա-
ցութիւնն՝ մանաւանդ գաւառաց մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ.— Տ. Վահան Վարդապետ
ըսել կուզէ թէ գաւառական վարչութեանց
կազմակերպութեան ձեւն ալ թերի է, ինչ-
պէս կեղրոնինը, եւ անոր չափ եւ թերեւ
աւելի կարօտ լաւագոյն կերոլարանավոխու-
թեան մը : Եատ քնական է որ երբ կեդրոնը
վարչական լաւ կազմակերպութիւն մը չունե-
նայ, գաւառներն ոչ նուազ խանդարեայ դը-
րութեան մը մէջ կը դտնուին : Այսպիսի վի-
ճակ մ'անչուշտ չկրնար ու շաղրութենէ վը-
րիպիլ, սակայն յայտնի է որ գործելու եղա-
նակին մէջ ալ կարդ մը պէտք է պահուի, եւ
կարելի է չէ առանց կարգի գործել, եւ յաջո-

զիլ արդիւնք մը ձեռք բերելու : Այս կարգը
պահելու պարտաւոր եմք մննք այժմ, ուստի
Տ. Վահան Վարդապետի յարուցած խնդիրն
որքան ալ կարեւոր լինի, չենք կարող դայն
այժմ նկատողութեան տոնուլ, վասն զի խըն-
դիրն Ատենապետաց զիւանին բերած ծրագ-
րին վրայ է, և այդ պէտք է լինի մեր ուշադ-
րութեան կէտ նպատակին և մեր լիճարանու-
թեանց առարկան : Խակ թէ ի՞նչ եղանակաւ
այս օրինաց ծրագիրն պիտի ընդունի իւր ո-
րոշումն, պարզենք զայն ևւս քանի մը խօս-
քով : Կանոնն՝ որ մեր ուղեցոյցը պիտի լինի :
Կրկին ճանրայ կը բանայ այս մասին մեր առ-
ջեւ, և խնդիրն այնպիսի ընթացք մ'առած
է, որ կրնանք անարդել քայլել ո՛ր ճանրէն
ալ ուղենք :

Աեր ներքին կանոնադրին ԵԵՐԴ. յօդ-
ուածը կըսէ :

« Ոչ մէկ ծրագիր օրինաց բաց ստիպող
դէպերէ՝ չդրուիր վերջնական քուէի, եթէ ե-
րեք որոշումէ չանցնի, իրարմէ զոնէ մէկ շա-
բաթ միջոցով : »

Նթէ ժողովն ստիպողութիւն չընծայէ ծըրագրին, այս է կանոնին տրամադրած եղանակին, որու համակերպիլ հարկ կը լինի ։ Ժողովն արդէն առաջին քայլ մ'առած է այս ճանքուն մէջ, ընդունելով ծրագրին սկզբունքն, որով տուած կը համարուի կանոնին տրամադրած երեակ որոշմանց առաջինն, հետեւապէս երկրորդ որոշումն այսօր տեղի կունենայ ծրագրին յօդուած առ յօդուած ընթերցմամբն եւ քուէարկութեամբն, իսկ երրորդ եւ վերջինն յառաջիկայ նխտին, որ ըստ կանոնի գումարելի է ութ օրէն, ինչպէս առաջարկեց տեղեկաբեր էֆէնտին։ Իսկ երբ ինդրոյն ստիպողութիւն ընծայուի այն ատեն հարկ չմնար այս եղանակին հետեւելու, այլ սլարդ ձեւով այսինքն միակ քուէարկութեամբ կը տրուի որոշումն, ինչպէս կը տրամադրէ կանոնագրին 59րդ. յօդուածը։

Այս առաջին եղանակին հետեւիլ կուզեն տեղեկաբեր է ֆէնտիլին հետ Շահպաղ եւ Մելիքեան Գարեգին է ֆէնտիները, սա տարբերութեամբ որ Շահպաղ է ֆէնտին՝ կուզէ որ յառաջիկայ նիստն, որ ըստ կանոնի 8 օրէն

գումարելի է , 15 օրէն եւ թերեւս աւելի յեռոյ տեղի ունենայ , իսկ Ղազարոսեան եւ Փափազեան է ֆէնտիներն՝ տեղեկաբեր է ֆէնտիկացատրութեանց վրայ դործին ստիպողութիւնը դիտելով՝ կառաջարկեն որ այսօր ուղի ունենայ վերջնական որոշումն : Այս աւաջարկն ալ կատարելապէս կըհամաձայնի կառնին , եւ եթէ ժողովին հաւանութիւնը գրտէ , այն ատեն ծրագիրը կը կարդանք այսօր օդուած առ յօդուած , եւ վերջնապէս կը քըլէարկենք զայն , հետեւելով այն եղանակին , զոր կանոնը կը սահմանէ ստիպողական պարագայից համար :

Փողովին կը մնայ ուրիհն որոշել թէ այս
կըկին եղանակներուն ո՞րը կուզէ ընդունիլ և
անոր համաձայն չարժիլ :

Եթէ Սէրձեան Տ. էֆ. — Խնդրոյն ստիպութիւնն ոչ ոք կը ժխտէ : Ժողովը արդէն փուր անցեալ տարուայ շրջանի մէջ զգաց դայն, եւ եթէ Ժողովոյ բացումն այս տարի երկար տասն յետաձգուեցաւ, այն պատճառաւ էր որ Ատենապետաց դիւանը բաւական ժամանակ ունենայ կատարեալ ծրագիր մը պատրաստելու եւ բերելու համար, որպէս զի Ժողովը դիւրաւ համոզուի եւ քուէարկէ : Տեղեկաբեր է-ֆէնտին կառաջարկէ ծրագիրն այսօր յօդուած առ յօդուած վիճաբանութեան ենթարկել եւ 8 օրէն նիստ գումարելով՝ զայն վերջնասլէս քուէարկել . իսկ Շահպաղ էֆէնտին այսքան միջոցը բաւական չդժներ եւ 15 օրէն կառաջարկէ նիստ գումարել, ուրիշ մ'ալ թերեւո 30 օր միջոց ուղէ : Բայց մենք արդէն 25 օրէ՞ի վեր ուսումնասիրելու վրայ ենք այդ ծրագիրն, եւ 15 օրուան պայմանաժամէն յետոյ՝ այլ եւս նոր բան մը չունինք սովորելու Ռւստի և ալ այն կարծիքէն եմ որ այսօր ծրագիրը յօդուած առ յօդուած կարդալով վիճաբանութեան ենթարկենք դայն, եւ միակ քուէարկութեամբ վերջացնենք :

ԴԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Ես ալ արդարեւ մտադիր էի առաջարկելու, որ ներքին կանոնագրին տրամադրութիւնն ինչ որ է օքի-

նաց ծրագիրներու նկատմամբ կէտ առ կէտ ՚ի գործ զրուի , բայց որովհետեւ մեր ներքին գործերն ըստ բաւականին ծանրացած են արդէն եւ Աղգային վարչութիւնը հրաժարական տուած է , որով բնապէս աւելի կը գժուաւարանայ իրաց վիճակն , ուստի այն կարծիքն ունիմ թէ ոլէտք է այսօր միակ ընթերցմանը եւ քուէարկութեամբ ընդունիլ ծրագիրն եւ վերջացնել խնդիրն :

Այդ ծրագիրն որքան ալ մանրամասն վիճաբանութեան ենթարկենք , չենք կրնար տակաւին կատարուն վիճակի մէջ գուրս հանել զայն , վիճաբանութենէն աւելի՝ փորձը պիտի կարենայ անոր թերութիւնները ՚ի վեր հանել , ուստի լաւագոյն է որ գործադրութեամբ փորձնք զայն , եւ այնպէս հասու լինիմք անոր թերութեանց : Կառաջարկեմ ուրեմն այսօր վերջնապէս քուէարկել ծրագիրն , եւ անմիշապէս ընտրել տալ նոր վարչութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՀՅ. — Խնչպէս պահ մ'առաջ յիշեցի ձեզ մանրամասնորէն , ներքին կանոնագիրն այս մասին երկու եղանակ ցոյց կուտայ մեղ , որու համաձայն կրնանք այս ծրագիրն թէ այսօր վերջնապէս քուէարկել , իբրև ստիպողական , եւ թէ երեք որոշումէ անցնել , եւ այն ատեն հարկ կըլլայ՝ այսօր յօդուած առ յօդուած ընթեռնլով եւ քուէարկելով 8 օրէն նիստ մ'ալ գումարել , եւ վերջին որոշումը տալ , վամ զի արդէն խնդիրն առաջին որոշում մ'առած է սկզբունքն իմ կամ համար առաջարկելու մէջ յաջուած առ յօդուած ընթեռնլով եւ քուէարկելով 8 օրէն նիստ մ'ալ գումարել , եւ վերջին որոշումը տալ , վամ զի արդէն խնդիրն առաջին որոշում մ'առած է սկզբունքն ֆողովին կողմէ ընդունուած լինելուն համար : Հետեւապէս որ եղանակին ալ հետեւնք , ոչ թէ կանոնին դէմ մնդանչած , այլ ընդհակառակն կատարեալ ճշդապահութեամբ անոր համաձայն շարժած կըլլանք : Ուստի տեղի չկայ վարանելու ծրագիրը կամ այսօր կամ յառաջիկայ նիստին վերջնապէս քուէարկելու մասին վայսէն վարչութեամբ ընդունելէն անմիջապէս յետոյ՝ կրնար բարեփոխմանց ենթարկուիլ , ուստի կրնան բացակաները գալ ՚ի վերջէ եւ առարկութիւններ ընել , դիտուրիսն ունիինը ըսելով , ուստի կը կասկածիմ որ մի՛ գուցէ այս կերպով առիթ ընծայած լինինք դործին բարոյական ոյժը ակարացնելու :

ԵՍԻՍՈՒԹԵԱՆ Տ. ԵՖԵՆՏԻ. — Վարչութեան ներքին վիճակին վրայ ինչ գիտողութիւններ որ եղան , իրաւացի են եւ ամենուալ յայտնի , ուստի ոչ ոք կրնայ հակառակը պնդել

Ահա այս նպատակաւ էր որ երրորդ որո-

շումն ութ օր յետաձգել առաջարկեցի , բայց եթէ գարձեալ բացականեր դանուին , եւ առարկութիւն յարուցանակն , այլ եւս նշանակութիւն եւ ոյժ չունենար իրենց գիտողութիւնը , կարծեմ այս առթիւ հարկ է նաեւ ծողովոյ դումարմանց օրին նկատմամբ ալ փոփոխութիւն մը կատարել . . .

2ԱՅՆ ՄԲ. — (Ընդմիջելով) Օրակարգն է արդէն այդ խնդիրն :

ԵՍԻՍՈՒԹԵԱՆ Տ. ԵՖ. — (Շարունակելով) Վասն զի մեր նիստերու սովորական օրն ուրաքաթ , թղթատարի օր ըլլալուն՝ վաճառականութեան եւ առեւտրոյ զբաղողներուն համար անյարմար եղած է : Վերջապէս եղանակացրնելով կը կրկնեմ ինչ որ առաջարկեցի ՚ի սկզբան , այսինքն այսօր ծրագրին յօդուած առ յօդուած ընթերցումն եւ երկրորդ որոշումը կատարել , իսկ վերջին որոշումն յետաձգել , եւ պահ մը յետոյ՝ իւր տուած բացատրութիւններէն վերահասու եղանք թէ ինչ նկատմանց ներքեւ այս յետաձգումը կուզէ : Երեսփոխանք ոմանքը մասնաւոր բանակցութեանց մէջ յայտնած են եղեր թէ ծրագրին վրայ՝ գիտողութիւն ունին , սակայն այսօր բացակայ են ծողովէն : Ուստի նուսուֆեան է ֆէնտի կը բաղձայ միջոց տալ անցնիլ կանոնին այդ կէտն , եւ ծըրագրին վիճաբանութեամբն զբաղիլ : Սրբազն Պատրիարքը ծողովիս բացման առաջին նիստի օրը նամակ մը գրած եւ ծողովիս յանձնարարած է Պատրիարքարքնի վիճակին դարման տանիլ , եւ պատասխանատուութիւնը մեր վրայ թողած է այս կերպով : Հետեւապէս եթէ այսօր Պատրիարքարքնի մէջ զեղծում մը տեղի ունենայ , Սրբազն Պատրիարք Հօր բան մը չունինք ըսելու , այլ այս ծողովին վրայ կիյնայ պատասխանատուութիւնն թող ներեն ինձ ըսելու թէ այն քան ձեւականական ետեւէ կիյնանք որ մինչեւ մոլար ընթացքի մէջ կը մտնենք : Մեք ստուգիւ Սրբազն Պատրիարքն ունինք հրաւէր են ընդունած , եւ որ լրագրաց մէջ ալ

բացց նոյն իսկ նորին Սրբազնութիւնն է որ Փռղովին ուշադրութիւնը կը հրաւէրէ Պատրիարքարանի վիճակին վրայ ևսել է որ սովորողական է խնդիրն . իսկ այդ ծրագիրն քանի մը շաբաթէ ՚ի վեր ամենուն գրադարձ է , եւ լրագիրք ալ հրատարակած են արդէն զայն , ուստի յետաձգմանց հարկ չկայ , այլ պէտք է միակ քուէարկութեամբ այսօր վերջացնել , եւ եթէ թերութիւններ ալ ունի , գործադրութեամբ ստուգելէ յետոյ բարեփոխել :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԵՖ. — Թէ՝ Պատրիարքարանի եւ թէ գաւառաց վիճակին մեր աչքին առջեւ է , եւ եթէ այս ծողովը ստանձնած է պատասխանատուութիւնն , պէտք է աշխատի այդ վիճակը բարեռքելու , եւ որքան կարելի է առանց ժամանակ կորսնցնելու : Տեղեկարեր է ֆէնտին խնդրոյն ստիւդութիւնը հաստատելով առաջարկեց տակաւին ծրագրին վերջին որոշումն ութ օր յետաձգել , եւ պահ մը յետոյ՝ իւր տուած բացատրութիւններէն վերահասու եղանք թէ ինչ նկատմանց ներքեւ այս յետաձգումը կուզէ : Երեսփոխանք ոմանքը մասնաւոր բանակցութեանց մէջ յայտնած են եղեր թէ ծրագրին վրայ՝ գիտողութիւն ունին , սակայն այսօր բացակայ են ծողովէն : Ուստի նուսուֆեան է ֆէնտի կը բաղձայ միջոց տալ անցնիլ կանոնին այդ կէտն , եւ ծըրագրին վիճաբանութեամբն զբաղիլ : Ա՞վ չուզեր այդ գիտողութիւնները լսել , ո՞վ չուզեր խընդիրները վիճաբանութեանց բովին մէջ չպտել . կարծիքներու ընդհարումէն լրյու կը ծագի եւ այդ լոյսն խնդիրներն կառաջնորդէ բանաւոր եւ իրական լուծում մը գտնելու :

Ես իմ մասին թէեւ իմ յատուկ ծրագիրս ունէի , բայց այս ծրագրին դէմ գիտողութիւն մը չունիմ , եւ զայն ընդունած եմ , թերեւս ամեն կէտերուն համամիտ չպտնուելով անգամ . փորձը թող մեղ հաստատէ եւ իրաւացի կարեւութիւններն ունի այսօր պատրիարքարքնի վիճակին դարման տանիլ , եւ պատասխանատուութիւնը մեր վրայ թողած է այս կերպով : Հետեւապէս եթէ այսօր Պատրիարքարքնի մէջ զեղծում մը տեղի ունենայ , Սրբազն Պատրիարք Հօր բան մը չունինք ըսելու , այլ այս ծողովին վրայ կիյնայ պատասխանատուութիւնն թող ներեն ինձ ըսելու թէ այն քան ձեւականական ետեւէ կիյնանք որ մինչեւ մոլար ընթացքի մէջ չպտել . կարծիքներու ընդհարումէն լրյու կը ծագի եւ այդ լոյսն խնդիրներն կառաջնորդէ բանաւոր եւ իրական լուծում մը գտնելու :

կարդացած են ժողովին այսօր նիստ ունենաւը , երեք նիստերէ ի վեր գիտեն թէ Վարչական կազմակերպութեան ծրագիրն է խընդրոյ եւ վիճարանութեան նիւթ ժողովին համար , գիտեն նաև որ առաջին նիստին մէջ ստիպողութիւն տրուած է անոր , ինչո՞ւ ուրեմն չեն ներկայանար ժողովի , եթէ զիտողութիւնն ունին , եւ ի՞նչ իրաւունք ունին ի վերջէ ելնելու խնդիր յարուցանելու , երբ իրենց երես-փոխանի պաշտօնը կատարելու անփայթ են :

Աւրիշ դիտողութիւն մ'ալ կընէ Եռւսութեան է ֆէնտին, այդ մասին ալ համամիտ չեմ իրեն եւ կը հերքեմ կարծիքն :

Կառարկէ թէ՝ ծրագիրն քու է արկուելէ
անմիջապէս յետոյ, կարելի չէ բարեփոխում
կատարել, ուստի սա կը հետեւցնէ թէ կան-
խաւ միջոց տալ պէտք է երեսփոխանաց դի-
տողութիւն ընելու :

Նոյն իսկ ծրագիրն ժողովին կողմէ ընդունվելէ օր մը յետոյ՝ երեսփոխան մը կրնայ առաջարկութիւն մը ներկայել անոր այս կամ այն կէտն բարեփոխելու համար. Ժողովն 'ի հարկէ որ եւ է խնդիր իրեն առաջարկուած ատեն՝ անմիջապէս ընդունելու պարտաւոր չէ, բայց այդ առաջարկը կը յդէ ձեռնհաս Դիւանին, որ կը նախաքննէ զայն եւ տեղեկագիր մը կը բերէ Ժողովին թէ առաջարկն օդտակարէ կամ ոչ, եւ Ժողովն՝ զայն լիճարանութեան ենթարկելով՝ իւր որոշումը կուտայ: Ուստի դիտողութիւն ընելու կամ բարեփոխում ներկայացնելու համար միշտ բայ դուռ ունին երեսփոխանք կանոնին մէջ, եւ պարտաւոր ան ձեռնորդէն: Եւ այս պահանջման մէջ կատարէ, օշարակ կը մատուակէ, մինչդեռ անդին իւր հիւանդը ճգնաժամու մէջ ինկած է ողեվար: Ահա այսպէս մենք ալ մեր վարչութեան վիճակը դարմանի կարօտ կը գտնենք, ծրագիր մը կը յանձնարարենք ստիպանօք, կ'ստանամք զայն, եւ հիմայ ելեր 8 օր կամ 15 օր յետաձգել կուզենք անոր որոշումն եւ աւելորդ արարողութիւններով կ'զբաղինք, չեմ հասկնար թէ ինչո՞ւ: Ես կառաջարկեմ դարձեալ որ ընդունինք այս ծրագիրն, հետզհետէ գործադրութեամբ բարեփոխելու պայմանաւ: Կը խնդրեմ քուէի դրէք, Ատենապետ էֆէնտի:

ՀԱՅՆԵՐ . — Քուէ , քուէ :

դարձիք մ'ալ ունի, որ կուզէ կատարեալ եւ
ընդհանուր համաձայնութիւն մ'ապահովել այս
ծրագրին ընդունելութեան համար, որպէս զի
բարոյական կատարեալ ազգեցութիւն մ'ու-
նենայ գործը : Երբէք հարկ չկայ այդպիսի
ընդհանուր հաւանութիւն մը փնտռելու, հակա-
ռակ կարծիքներ, եւ գէթ ձեռնպահներ, միշտ
կը գտնուին շատ խնդիրներու մէջ, ուստի
ի՞նչպէս կարելի է սպասել որ ամենքը համա-
ժիտ լինին, եւ միաձայն քուէարկեն ծրագիրը :

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — կը տեսնեմ որ տեղեւ-
կարեր է Փէնտիի այն խօսքը թէ՝ անհամաձայ-
ուութիւնն մի՛ գուցէ տկարացնէ գործին ոյժը ,
սակաւ ինչ թիւր կերպով մեկնուեցաւ , ուս-
տի պարտք կը համարիմ բացատրել թէ ի՞նչ
կերպով ըմբռնեց Դիւանը զայն , որպէս զի ա-
ւելորդ խօսքերու տեղի չմնայ : Ատենապե-
տաց դիւանն հարկ դատած էր կատարեալ
համաձայնութեամբ իւր ծրագիրը յօրինել , եւ
թէ եւ այս պատճառաւ սակաւ ինչ իւր բա-

նակցութիւններն երկարել ստիպուած էր՝
բայց յաջողած էր վերջապէս իւր նողատակին
մէջ։ Տեղեկաբեր է Թէնտին այս ոլարագան
ակինալկելով՝ փափաք կը յայտնէր որ Ազգա-
յին ժողովը ալ նոյն համաձայնութեամբ լնդ-
դըրկէ խնդիրն եւ բացակայ երեսփոխանաց
դիտողութեան տեղի չտալու համար՝ ութ օր-
ւան յետաձգումն օգտակար կը դատէր։

ԵՌԻ ՍՈՒԹԻՒՆ ՏԵԱՆ Տ. ԼՅ. - (ԸՆԴՄԽԾԵԼՈՎ) Ա. Խո՛,
Ճշմարիտ է ձեր բացատրութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — (Շարունակելով) Բաց
աստի Փափաղեան է Փէնսիին դիտողութիւնը ը-
րաւ որ եթէ ծրագրին մանրամասնութեանց
վրայ զիճաբանել հարկ լինի, երկար քննադա-
տութիւններ կը բացուին: Ժողովը արդէն ծրագ-
րին սկզբունքն ընդունած եւ Վարչական կազ-
մակերպութեան ստիպողութիւնն ընդ հանրա-
պէս ճանչուած ըլլալով, յուսալի չէ որ ե-
րեսփոխանոք աւելորդ քննադատութեանց տե-
ղի տան, այլ զանազան ոլարագաներուն նը-
կատմամբ թերեւս կարծիքները տարբերին,
եւ այս կարծեաց տարբերութիւնն ալ կարճ
զիճաբանութեամբ մը կը նայ ոլարդուիլ:

ԱՏԵՆԱԴՊԻՐ էֆ. — Ես՝ այնպէս կը նըկա-
տեմ թէ ամենէն բանաւոր եղանակն էր ծը-
րագիրը յօդուած առ յօդուած զի՞ճաբանու-
թեան ևնթարկել այսօր. եւ այս կերպով թե-
րեւս ցայս վայր ծրագրին կէսն հասած կըլ-
լայինք. Խսկ որոշումը կընար յառաջիկայ նիստին
մնալ, մանաւանդ որ այսօր խսկական մհծա-
մանութիւն չունինք :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. էֆ.— Կը խնդրեմ որ
Ատենապետ է Փէնտի հաճիք Ժողովին կամքը
հարցնել թէ վիճաբանութեան շարունակու-
թիւնը կուզէ թէ ոչ, վասն զի երբ Փափազ-
եան է Փէնտին խօսքն աւարտեց, քուէ խընդ-
րողներ եղան: Եթէ Ժողովը հաւանի վիճա-
բանութիւնը շարունակելու, եռ ալ խօսք ու-
նիմ:

ՇԱՀՊՈԶ Ն. Եֆ. — Խօսք կուղեմ կանո-
նադրական դիտողութեան մը համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԵՅ. — Տակաւին ուրիշ խօսք
ուղղողներ կան, բայց նախ՝ Ժողովին կամքը
պիտի հարցնեմ թէ բաւ կը համարի՞ վիճակա-
նութիւնը, թէ ոչ զայն կուզէ շարունակել:

Հետեւապէս Առենապետ է Փէնտին քը.
Եթի կը դնէ խնդիրն եւ Ժողովը մեծագոյն
մասամբ ԿՈՐՈՆԷ շարունակել զիհաբանութիւ-
նը :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. Եֆ. — Ես չեմ ընդու-
նիր այն կարծիքն՝ որ կուզէ ութ օր տակաւին
յետաձգել այս օրինաց ծրագրին ընդունելու-
թիւնն , բացակալայ երեսփոխանաց դիտո-
ղութիւններն ալ լսելու նպատակաւ : Թող
ներուի ինձ ըսել թէ այս կարծիքը բանաւոր
չէ , վասն զի ժողովը չկրնար ժամանակ զո-
հել բացակայ անդամոց սպասելով , եւ անոնց
համար կաշկանդուած մնալ անգործ , քանի
որ օրինաւորութեան պայմանաց ներքեւ հա-
մոզում դոյացուցած ենք խնդիրն լուծելու
համար : Արդարեւ ես ալ չեմ հաւանիր երբէք
որ խնդիրներն հապճեալով որոշում ընդունին
բայց ներկայ խնդիրն այնպիսի վիճակի մը մէջ
չգտնուիր : Բացակայ երեսփոխաններն՝ որ դի-
տողութիւն ունին եղեր , կարդացած են ծը-
րագիրն , երկու նիստէ ՚ի վեր օրակարգն
խնդիրն , եւ գիտեն որ ժողովը զայն նըկա-
տողութեան պիտի առնու այսօր , բայց ժողովի
չեն եկած : Խրենց երթեւեկը զիւրելու հա-
մար ժողովոյ նիստերը Ղալաթիա փոխադրը
ւեցան , դարձեալ չեկան , եւ կուզեն տակա-
ւին ժողովին վրայ ազդեցութիւն բանեցնել
եւ անոր ընթացքն արգելուլ : Պատճառ մը չ
կայ երբէք որ մենք այսօր չկարենամք մեր
որոշումն տալ . մեր ներքեն վիճակը խիս-
ծանր է եւ անմիջական դարմանի կարօտ
ուստի պէտք է որ այսօր անմիջապէս ընդուն
ուի Ատենապետաց դիւանին բերած ծրագիր
եւ գործադրութեամբ փորձուի անոր թերու-
թիւնները , վասն զի ամեն օրէնք գործադր

ըութեան մէջ կրնայ հասնիլ կատարելութեան :

Տ. ՅՈՎՀ. ՔՀՆՅ. ՄԿՐԵԱՆ. — ԽՆԴՐՈՅՆ
ԱԹԻՍԼՈՂՈՒԹԻՒՆԸ ՀԱՏԵՐ յայտնեցին, եւ ոմանք
ալ լրելեայն ընդունեցին զայն։ Արդարեւ ըս-
տիպողական է գործոց վիճակը եւ պէտք է
օր առաջ կարգադրել մանաւանդ որ՝ ինչպէս
կեր մեր առաջոնահեննեռէն՝ մին Արբազան

Պատրիարքի մէկ գրաւոր յայտարարութիւնը
կայ, որ այս ժողովին թողած է իրաց վիճա-
կին դարմանը խորհիլ: Բայց այս ստիպո-
ղութեան պարագային մէջ զիտելու արժա-
նի կէտ մը կայ, եւ այն է թէ ստիպողու-
թեան հետ՝ քիչ մ'ալ աճապարանք ցոյց կու-
տան ըսելով թէ հետզհետէ բարեփոխելու պայ-
մանաւ պիաի ընդունուի ծրագիրն եւ թէ զիտո-
ղութիւններն ի վերջէ՝ ալ կրնան տեղի ունենար
Նս կուղեմ հասկնալ թէ ի՞նչպէս կրնանք այսպի-
սի պայման մ՝ ընդունիլ, միթէ վարչական կազ-
մակերպութեան ծրագիրը ներքին կանոնադ-
րի հանգամանք ունեցող բան մ'է, որ կարե-
լի լինի յարաժամ բարեփոխել, թէ ոչ սահ-
մանադրական օրէնք մ'է, որ պիտի տիրէ նա-
և դաւառներու գրայ:

Եթէ պիտի կրնամք զայն իբրեւ ներքին
կանոնագիր նկատել, անշուշտ այսօր վիճաբա-
նութիւնը կ'սկսի անոր վրայ, եւ յառաջիկայ
նիստին մէջ փակուելով՝ կը քուէարկուի ծրա-
դիրը, հետղնետէ բարեփոխելու պայմանաւ, իսկ
եթէ իբրեւ օրէնք պիտի տիրէ նոյն իսկ գա-
ւառաց մէջ, այն առեն յօդուած առ յօդուած
կը քննուի, եւ ուրիշ նիստի մը մէջ, ուր մե-
ծամանութիւն պէտք է գտնուի անպատճառ,
զոր չունինք այսօր, ինչպէս յայտարարեց Ա-
տենազետ էֆէնտին, կը քուէարկուի, վե-
րաքննութեան համար երեք կամ երկու տարի
պայմանաժամ որոշուելով եւ չէ թէ անժա-
մանակ բարեփոխելու պայմանաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ էթ.—Դիւանը պարտք կը համարի, ի յուշ ածել ձեզ Ժ-ՊՊՎին մէկ նախորդ որոշումն , որ նոյն իսկ վերաքննութեան եղանակին վրայ է , եւ մեր քանելիք ընթացքը կը գծէ . Այդ որոշման համաձայն՝ Սահմանադրութեան վերաքննութիւնը պէտք է կանո-

ադրական ձեւով կատարել , եւ գործադրութեան դնելով՝ փորձառաբար ստուգել թերութիւններն եւ այնուհետեւ օրինաց կարդ դասել : Կը տեսնէք որ հետզհետէ բարեփոխելու պայմանն նոյն իսկ այս որոշման մէջ կը պարունակի , եւ երբէք գործին վնաս բերելու հանգամանք մը չունի : Ուստի այս մասին եւս վարանելու պատճառ մը չունինք :

Տ. ՎԱՀԱՆ ՎՐԴՊՏ. — Կը զարմանամ թէ
ինչուէս առանց դաւառներու եւ թաղերու
վարչութեան վիճակը դիտնալու , կեղրոնա-
կան վարչութիւնը պիտի լազմակերպենք : Ես
դաւառներն այցելած եւ այս մասին տեղե-
կագիր մը շինած եմ , եթէ ժողովդ կը հաճի
կարդամ դայն , որ իբաց վիճակն իւր առջեւ
ունենայ եւ դիտակցութեամբ գործէ : Մենք
գործի մէջ փոխանակ աստիճանաբար վարէն
վեր ելնելու , բարձրէն կ'ակախք , ուստի կը
վախնամ որ մի գուցէ Փափաղեան էֆէնտիի
ակնարկած հիւանդին վեստենք :

ԱՏԵՆԱՊԵՏ կՅԵՆՏԻ . — Ազգային ժողովը վարչութեան կազմակերպութեան ձեւն որոշելէ յետոյ նկատողութեան պիտի առնու անշուշտ դաւառներու եւ թաղերու վիճակը : Ատենապետաց դիւանն՝ ինչպէս իւր տեղեկադրին մէջ կ'ակնարկէ , կուղէր այդ մասն ալ ուսումնասիրել , սակայն իւր պաշտօնէն դուքս գանելով , հարկադրեցաւ զայն 'ի բաց թողուլ , եւ Ազգային ժողովոյ ուշադրութեան յանձնել Տ. Վահան վարդապետին գիտելուալ կուղեմ որ վարչական կազմակերպութիւնը կեղրոնէն սկսիլը վերէն վար իջնել չէ , այլ խնդիրը լուծելու ամենէն բանաւոր եղանակն է , վասն զի շէնքը հիման վրայ կը կառուցուի եւ չկազմակերպեալ կեղրոն մը կազմաւորեալ ճիւղեր չկրնար ունենալ :

ԵԱՀՊԱԶ Ն. ԷՅ. — Այս խնդիրն նախորդ
շրջանին ներկայացաւ Ժողովին և վարչական
կազմակերպութեան ձեւը փոխելու ոլէաքն
ընդունուեցաւ, բայց ոչ իբր ստիպողական
խնդիր։ Այօր կը ներկայանայ ստիպողական

կերպով, եւ ստիպողութեան ալ սլատճառ
ոյց կը արուի թէ Վարչութիւնն հրաժարած է՝
ու աշխատավոր խառնելու համար պէտք է

Եւ զայն շուտով կազմուլու համար առաջ կազմութեան ձեւը որոշել : Այսպիսի պատճառ մը գլխովին անտեղին է , վասն զի մինչեւ որ նոր դրութիւն մը չորոշուի , հինը շկրնար փոխուիլ , եւ մենք հրաժարեալ Վարչութեան տեղ՝ վարչութիւն մը դեռ չղրած՝ եկեր հապենելով օրէնքը շինել կուղենք եւ Վարչութեան չփոյութիւնը ստիպողութեան պատճառ կը համարինք : Այսպիսի օրէնք մը՝ որ աղդին գործերը վարող մարմնոյն կազմութիւնը պիտի սահմանէ , այսպէս շտապաւ չորոշուիր : Մեր ձեռքը գտնուած կանոնադրին համաձայն այդ ծրագիրը քանի մը նիստերու մէջ յօդուած առ յօդուած վիճաբանութեան պէտք է լենթարկենք , ամենուն դիտողութիւնները լսենք , եւ այնուհեաեւ քուէարկենք , բայց այս ալ ստիպողութեան պատճառը բառնալով կրնայ ըլլալ : Փափաղեան է ֆէնտին մեր ընթացքն այն մարդուն վիճակին նմանցուց , որ իւր հիւանդին համար եւրոպայէն բժիշկ մը բերել կուտայ , եւ փոխանակ զայն անմիջապէս ոգեվար հիւանդին քով առաջնորդելու , սրահին մէջ ընդունելութեան արարողութիւններով կ'զբաղի անոր հետո Փափաղեան է ֆէնտին կը սխալի , իւր ակնարկած հիւանդը հարբուխ ունի , եւ անոր վիճակը վտանգաւոր չէ , ոգեվար հիւանդը մեր խեղճ գաւառացիներն են , անոնց վիճակն է աւելի գարմանի եւ բժիշկի կարօտ , եւ մենք զանոնք մեկուսի թողեր եւ հարբուխ ունեցող հիւանդը կը հոգանք :

Արդ տեսնենք կանոնը ինչպէս կը գծէ
մեր բռնելիքը բնթացքն :

« Յօդ. 60. — Ոչ մէկ ծրագիր օրինաց՝
բաց ստիպող դէպերէ՝ չորվիր վերջնական
քուէի, եթէ երեք որոշումէ չանցնի, իրար-
մէ զոնէ մէկ շաբաթ միջոցով։

Առաջին որոշումը յատկապէս ծրագրին ընդհանրութեան վրայ կըլլայ : Ժողովին կը հարցուի միթէ կուզէ՞ երկրորդ որոշման անցնիլ :

Երկրորդ որոշումը կը լլայ ամեն մէկ յօդ-
ւած քուէի դնելով, նաեւ անոնց վերաբեր-

ալ բարեփոխութիւնները , եթէ կան : Փողո-
կորոշէ միթէ կուղէ՝ երրորդ օրոշման անց-

Երրորդ որոշումն ետքը՝ որ ծրագրին
ովանդակութեանց եւ մասնաւոր տրամադր-
ութեանց վրայ կը լլայ, վերջնական քուէի կը
ունարկուի, որն որ կը կնքէ որոշումը » :

Ահաւասիկ ուրիշ յօդուած մ'ալ դարձ-
ալ նոյն նիւթին վրայ :

«Յօդուած 69. Եսեակ քուէարկութեամբ
սրդ որոշման տնօրէնութիւնը պիտեհէի խընդ-
ոց եւ տեղական օրինաց համար չէ, ասոնք
ակ քուէարկութեամբ եւ ոլարզ որոշման
գանակաւ կը տնօրինուին . այլ սահմանադ-
ական այն կէտերուն համար է որ ընդհանուր
զգին մէջ իրրեւ օրէնք պիտի տիրեն, ինչ
էս ընտրական օրէնք, հանգանակութեամ-
ոէնք, դաստիարակութեան օրէնք, իրաւան-
ւ պարտեաց կարեւոր սկզբունքէն բղիեա-
ցն տրամադրութիւնք՝ որ կայսերական ընդ-
անուր օրինաց համաձայն ազգային վարչու-
թեան ընթանալու շաւիզը կը գծեն եւ ան-
ատին յարդն ու պատկառանքը կը պահան-
են : »

Ահա կրկնակի յօդուածներ , որոց համա-
այն պարտաւոշ ենք մենք այդ ծրագիր-
ոդուած առ յօդուած քննել , բարեփոխել ե-
րեք որոշումէ անցնելով օրինաց կարդ անցը-
ել : Կըսուի նաեւ թէ՝ հետզետէ բարեփո-
խելու պայմանաւ սիստի քուէարկուի ծրագի-
րն : Զարմանալի է այս պայմանը , այդ օրէն
ը պիտի քուէարկենք մենք եւ յանձնեն
Ծրբազան Պատրիարքին , որ ըստ այնմ ընս

ութիւնները կատարէ եւ դործէ, եւ քըչ
ետոյ՝ պիտի դառնանք ըսենք, ՍրբազնՀայր

կասեցուր գործերդ , — ինչո՞ւ , — սխալէ
էինք , եւ բարեփոխեցինք օրէնքն Վերջապէ^մ
առաջարկութիւնն այս է որ , այս ծառագիրն յօդուած առ յօդուած քննուի , կ

նոնին տրամադրած եղանակաւ, իսկ որտե՛ Ը
տիպողութիւնը Վարչութեան չփոյնութեա-
պատճառաւ կը տրուի, Վարչութիւնը Ըն-
րուի նախ :

ՕՏԵԱՆ Ն. ԷՅ. — Զայնակից եւ:

ԱՏԵՆԱՊԵՏ էՅ. — Ուրեմն կառաջարկէք,
Շահսլազ է Փէնտի , որ նեղկայ ծրադիրը ման-
րամասնօրէն քննելով ընդունելու համար 'ի
հարկին Վարչութիւն մ'ընտրուի , ըստ նախ-
կին դրութեան :

ՆԱՀՊԱԶ Ն. Եֆ.— Ո՛չ, այդ կերպով չէ
առաջարկու, բացատրեմ ինչ որ ըստ : Ես սկզբ-
բան գիտել տուի որ գէթ մինչեւ 45 օր պէտք
էր պայմանաժամ տալ ծրագիրը վերջնապէս
քուէարկելու համար, բայց եւան առարկեցին
թէ այնքան ստիպողութիւն ունի գործն որ
ոչ միայն 45 օր այլ եւ ութ օր անդամ չէ
կարելի յետաձգել եւ պահանջեցին անմիջա-
պէս քուէարկութիւն, ևթէ վարչութեան չը
գոյութեան համար այնքան ստիպողական է
գործը, վարչութիւն մը ընտրուի ըստ, հետեւ-
արար թէական է իմ առաջարկու :

ԱՏԵՆԱՊԵՏ կֆ. - Շատ աղէկ հասկցայ
ձեր առաջարկութիւնն : Դուք ըսել կուղէք
որ եթէ վարչութիւն չունենալնում համար
է որ ստիպողութիւն կը տրուի ծրագրին , ա-
ճապարանօք շարժելու հարկին մէջ չիյնալու
համար՝ պէտք է հին ձեւով նոր վարչութիւն
մ'ընտրել եւ այնուհետեւ ծրագիրը քննել :

Սակայն խնդրոյն ստիպողութեան բուն
պատճառն Վարչութեան չգոյութիւնը չէ ,
այդ՝ պարագայ մ'է միայն , այլ մինչեւ ցարդ
տիրող ժողովականութեան դրութեան անբա-
ւականութիւնն է , որու համար ֆողովն իւր
անցեալ շրջանին մէջ հարկ դատած էր փոփո-
խել այդ եղանակն եւ Առենապետաց դի-
ւանին յանձնած էր ծրագիր մը պատրաստել ,
որ պաշտօնէական դրութեան վերածել կառա-
ջարկէ մեր Վարչական կազմակերպութիւնն :
Հետեւապէս այն առենաբաններն՝ որ ստիպո-
ղութիւն կընծայեն ծրագրին , Ազգ . Վարչու-
թիւնը իւր ձեւին ամութենէն ազատած տես-
նելու համար է , եւ չէ թէ անպատճառ հին
դրութեամբ կազմուած Վարչութիւն մ'ու-
նենալու համար : Խնդրոյն այս վիճակին

Նազրին մէկ քանի յօդուածները յիշեց , ան-
շուշտ հասկցնելու համար թէ անոնց տրամա-
դրութենէն խոտորիլն զեղծում մը գործել է
Արդէն ինչպէս քանի մ'անդամ կրկնեցի
խնդրոյն սկիզբէն ի վեր , ծողովեւ թէ յառաջի-
կայ նիստին վերջնապէս քուէարկէ ծրագիրն ,
այսօրուընէ սկսելով ընթերցումն , եւ երկ-
րորդ որոշումը տալով , եւ թէ առանց յառա-
ջիկայ նիստին թողելու այսօր վերջացնէ խըն-
դիրը . բնաւ երբէք կանոնին հակառակ ըն-
թացքի մէջ ինկած չըլլար , զի կանոնն կը նե-
րէ իրեն երկու կերպով ալ շարժիլ . ուստի ա-
մենեւին տարակուսելու բան չունինք թէ մի
գուցէ կանոնագանցութիւն մ'ըրած ըլլանք :

20366P. — ~~পুলক~~, ~~পুলক~~:

ԵՌԻՍՈՒԽԵԱՆ Տ. կֆ. — Ես ալ իմ անձ-
նական կարծիքս ունեցած եմ այդ ծրագրին
սլատրաստութեան առեն, բայց մնդմէ ոչ ոք
իւր անձնական կարծեաց վրայ պնդած է մե-
ծամասնութեան համաձայնութեանն առջեւ
Երեսիոխաններէն շատեր՝ արդէն կանխաւ մե-
զի հետ խորհրդակից գտնուեցան, եւ համա-
ձայնեցան, ուստի տարակոյս չկայ թէ Փո-
ղովը գրեթէ ընդհանուր համաձայնութեամբ

պիտի ընդունի ծրագիրն : Խսկ եթէ ես պահ
մ'առաջ առաջարկեցի այսօր երկրորդ որո-
շումը տալով ուժ օր յետաձգել երրորդն , ա-
ւելի ննրդ . յօդուածին հետեւելու մոօք էր ,
որպէս զի եթէ տարակարծիք երեափոխան մը
դանուի , չկրնայ ըսել թէ աճապարանօք շար-
ժեցան : Արդ՝ եթէ ստիպողական կը նկա-
տենք խնդիրը , կրնանք անշուշտ միակ որոշ-
մամբ ալ վերջացնել , բայց պէտք է որոշել
թէ ծրագիրն երեք որոշումէ անցընելու պէտք
չկայ , իբր ստիպողական , եւ ստիպողութիւնը
բացակայից ալ հաղորդելու համար՝ վերապա-
հել խնդիրն յառաջիկայ նիստին , զայն ուժ
օրէն գումարելու պայմանաւ , եւ նոյն նիս-
տին մէջ վերջնապէս քուէարկել ծրագիրն եւ
միակ որոշմամբ վերջացնել խնդիրն :

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԵՖ. — ԿԸ ՀԱՅԱՃԱՅՆԻՄ
ԵՌԵԱՌԵՎԵԱՆ ԷՋԻՆՈԹԻՒ :

Ա.ՏԵՇԱՊԵՏ էֆ. — Խնդիրն կատարելա-
պէս պարզուած է այլ եւս : Եւ ժամ է Ժո-
ղովին որոշումը խնդրելու : Ուստի այժմ Ժո-
ղովին կամքը պիտի հարցնեմ թէ՝ կուղէ՞ ըստ
վերջին առաջարկութեան տեղեկաբեր էֆէն
տիի՞ ծրագրին ստիպողութիւն տալով յառա-
ջիկայ նիստին մէջ վերջնապէս քուէարկե-
ծրագիրը :

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. Եֆ. — Կառաջարկեմ այ
«վերջնապէս» բառը վերցնել քուէարկութեա
բանաձեւին մէջէն, եւ ըսել յօդուած առ յօդ
ուած քննել .

ՇԱՀՊԱԶ Ն. Եֆ. — Յառաջիկայ նիստի
ծրագիրը յօդուած առ յօդուած կարդացուե
լու համար քուէի զրէք խնդիրը :

Տ. ՅՈՎՀ. ՔԱՀԱՆԱՑ ՄԿՐԵԱՆ. — ԽՆԴՐՈ
ՍԹԻՊՈՂՈՒԹԻՒՆԸ ՔՈՒԷՒ ՊՆԵԼՈւ հարկ չկայ
զայն ամենքս ալ կընդունինք . ԺՈՂՈՎԲՆ դոր
ծը պիտի լինի սոյդ ծրագիրը յառաջիկայ նիւ
տին մէջ յօդուած առ յօդուած ընթեռնո
եւ քուէարկել, ուստի, Առենապետ է ֆէնտի
այս բանաձեւով ԺՈՂՈՎԲՆ կարծիքը հարցուցէ,
եւ կը վերջանայ խնդիրը :

Ա.ՏԵՇԱՊԵՏ էֆ.— Յօդուած առ յօդու
քուէարկելու ձեւը երեք քուէարկութեա
երկրորդին բացատրութեան սահմանուած
կանոնագրին մէջ : Կաղաչեմ որ Դիւանին գո
ծովութեանց միջամտելու չշտապէք եւ ս
տի տեսնէք Էոր խնդիրն իւր ընական սս
մանին մէջ պիտի քայլէ : Խսկ եթէ խնդր
ստիպողութիւն տուողներէն չէք գուք եւ չ
ուզեր որ յառաջիկայ նիստին մէջ ծրագր
վրայ տրուելիք քուէն վերջնական որոշ
համար լինի , աղատ էք հակառակ քուէ տ
լու , ծրագիրը վերջնապէտ քուէարկել ըս
չնչանակեր թէ զայն առանց կարդալու պի
քուէարկէք , ծրագիրն առաջին յօդուած
սկսեալ պիտի կարդացուի եւ ի հարկին
թէ յօդուած առ յօդուած՝ այլ նոյն խսկ պ
քերութիւն առ պարբերութիւն պիտի ք

զայն Փողովն, եւ ըստ այնմ իւր քուէն տայ ուստի ոչ միայն աւելորդ այլ եւ անտեղի իսկէ ձեր ուզած բանաձեռով քուէարկել :

Հետեւապէս Ատենասկեա էֆէնտի քուէ/
դրաւ խնդիրը հետեւեալ բանաձեւով .

Ո՞վ որ վարչական կաղմակերպութեան
ծրագրին այն աստիճան ստիպողութիւն կըն-
ծայէ, որ յառաջիկայ նխատին դայն վերջնա-
պէս քուէարկել կուզէ, իւր ձեռնաձիգ հաւա-
նութիւնն յայտնել բարեհաճի :

16 ձեռք ամրարձան .

Հակափորձին համար Ատենապետ է Փէնտիլի խնդրեց որ ո՞վ որ վարչական կաղմակերպութեան ծրագրին այն աստիճան ստիպողութիւն չընծայեր եւ յառաջիկայ նիստին զայն վերջնապէս քուէարկելու հարկ չդդար, իւրաքանչեան հաւանութիւնն յայտնել ընէ

Առաջին քուէին չմասնակցող երեսիոխանք
միահամուռ բողոքեցին թէ իրենք խնդրոյն
ստիտողութիւն չտուող չեն, այլ միայն չեն
հաւանիր որ ծրագրին սլարունակած յօդուա-
ծոց վրայ մի առ մի դիտողութիւն ընելու ի-
րաւունքէն զրկուին, այս պատճառաւ հա-
կափորձին համար քուէ տալ չուզեցին, վաս-
ուի իրենց կարծեաց հակառակ կը լինէր:

Աւատի Առենապետ է Փէնտին վերջին անդամու համար ալ բացատրելով թէ Դիւանի ներկայացուցած քուէարկութեան բանաձեւի վրայ իրենց կասկածանքն աւելորդ էր, յայտարարեց թէ խնդրոյն ստիպողութիւնն ընդհանուր հաւանութեամբ ընդունուած եւ յառաջիկայ նիստին մէջ ծրագրին վերջնակազմուէարկութեան ձեռնարկուին որոշուած էր

Յառաջիկայ նիստին օրակարգ կը սակացնուի :

4. Երադիր Վարչական կազմակերպութեան,

- | | |
|---|---|
| 2. Խնդիր ժողովարանի տեղափոխութեան և բացակայութեան երեսփոխանաց . — Տեղեկադիր Յանձնախմբին : | Ատեանը կը փակուի, ժամ 10 ին յառաջիկայ նիստը 15 օրէն գումարելու որոշմամբ . |
| | |



ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Կազմութիւն Նախաքննիչ դիւանաց :
Բ. Ծրագիր վարչական կազմակերպութեան :

Գիր 2 դրուշ

ԹԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԽԱյութ ԹԱՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի եւ Ղալարիոյ Ա. Լուսառորիչ
Եկեղեցւոյ բանկալը եւ Հայ գրավաճառաց քով